

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 38/4

29 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Անահիդա Խաչիկյանի 04.09.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 01.09.2015 թ-ի թիվ 6114044 ակտի դեմ:

Ա/Ձ Անահիդա Խաչիկյանի գանգատում բերված փաստարկները.

Սույն թվականի օգոստոսի 24-ին ստացվել է թիվ 6114044 ակտը այն մասին, որ Ա/Ձ Անահիդա Խաչիկյանը 2015 թ-ի օգոստոս ամսվա համար հարկային տեսչություն չի ներկայացրել արտոնագրային վճար վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, չի ստացել արտոնագիր՝ խախտելով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 5-րդ կետի պահանջները: Նույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն հաշվարկվել է տուգանք 756.000 ՀՀ դրամի չափով:

Հարկ է նշել, որ սույն թվականի հուլիսի 30-ին փոստի միջոցով Կենտրոնի ՀՏ է ուղարկվել արտոնագրային վճար վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, նշելով որպես հասցեատեր Կենտրոնի ՀՏ, սակայն թյուրիմացաբար հասցեն նշվել է սխալ: Նամակը հետ է վերադարձել Արամի 64 հասցե, որից հետո անմիջապես հին ծրարի հետ միասին նորից ուղարկվել է Կենտրոնի ՀՏ: 14.08.2015 թ-ին Կենտրոնի ՀՏ-ից ստացվել է թիվ 6352/5 գրությունը այն մասին, որ տվյալ հայտարարությունը չի ընդունվում:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, որի համաձայն վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Անահիդա Խաչիկյանը խնդրում է չեղյալ համարել վերը նշված ակտը և հաշվարկված տուգանքը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 13.08.2015 թ-ի թիվ 6114044 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Անահիդա Խաչիկյանի մոտ կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 01.09.2015 թ-ի թիվ 6114044 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 756.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Անաիդա Խաչիկյանը ք.Երևան, Արամի 64 127 հասցեում իրականացնում է վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն 6 /վեց/ աշխատատեղով:

Վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությունը «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հավելվածի 1-ին կետի, 4-րդ ենթակետի համաձայն հանդիսանում է արտոնագրային վճարով հարկվող գործունեություն:

Ա/Ձ-ն 2015 թ ի օգոստոս ամսվա համար հարկային տեսչություն չի ներկայացրել արտոնագրային վճար վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, չի ստացել արտոնագիր՝ խախտելով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 5-րդ կետի պահանջները:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց արտոնագրի գործունեության իրականացման տվյալ վայրում սույն օրենքի թիվ 7 հավելվածում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքում իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք առանց արտոնագրի գործունեության փաստացի իրականացնելու ժամանակահատվածի (բայց ոչ պակաս երեք ամսվա) համար սույն օրենքի թիվ 8 հավելվածով սահմանված կարգով հաշվարկված վճարման ենթակա արտոնագրային վճարի կրկնակի չափով: Արդյունքում լրացուցիչ գանձման է առաջադրվել 756.000 դրամ (42000x3x6):

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Անաիդա Խաչիկյանը սույն թվականի հուլիսի 30-ին փոստային ծառայության միջոցով Կենտրոնի ՀՏ է ուղարկել 2015 թ-ի օգոստոս ամսվա համար Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունը (այսուհետ նաև Հայտարարություն), սակայն թյուրիմացաբար Կենտրոնի ՀՏ հասցեն նշելու փոխարեն նշել է այլ հասցե: Արդյունքում նամակը հետ է վերադարձվել: Ա/Ձ Անաիդա Խաչիկյանը պարզելով, որ Հայտարարությունը հետ վերադարձվելու պատճառը հանդիսացել է հասցեատիրոջ հասցեն սխալ նշելը, Հայտարարությունը, ինչպես նաև վերադարձված ծրարի օրինակը կրկին ուղարկել է Կենտրոնի ՀՏ: Սակայն, Կենտրոնի ՀՏ 14.08.2015 թ-ի թիվ 6352/5 գրությամբ Ա/Ձ Անաիդա Խաչիկյանին տեղեկացվել է, որ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 5-րդ կետի հիմքով Հայտարարությունը չի ընդունվում: Նշված հանգամանքը հիմք է հանդիսացել արտոնագրային վճարի գծով Ակտով լրացուցիչ պարտավորություններ հաշվարկելու համար:

Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ փաստական հանգամանքներին, որոնք կարևոր նշանակություն ունեն սույն գործով որոշում կայացնելու համար:

Այսպես, Ա/Ձ Անաիդա Խաչիկյանի կողմից սույն թվականի հուլիսի 30-ին փոստային ծառայության միջոցով Կենտրոնի ՀՏ է ուղարկվել Հայտարարությունը, սակայն ծրարի վրա թյուրիմացաբար Կենտրոնի ՀՏ հասցեի փոխարեն նշվել է այլ հասցե: Սակայն այն փաստը, որ Հայտարարությունը ուղարկվել է Կենտրոնի ՀՏ, հիմնավորվում է նրանով, որ փոստային առաքման վերաբերյալ 30.07.2015 թ-ի կտրոնում հասցեատերը նշված է Կենտրոնի ՀՏ-ն:

Այսինքն, կարելի փաստել, որ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի հավելված թիվ 8-ի 5-րդ կետով սահմանված կարգով Ա/Ձ Անաիդա Խաչիկյանն իր

հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացրել նույն հավելվածի N 1 ձևով սահմանված հայտարարությունը, սակայն վերը նշված պատճառով Հայտարարությունը Կենտրոնի ՀՏ-ում չի ստացվել:

Կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ա/Ձ Անաիդա Խաչիկյանը 30.07.2015 թ-ին, այսինքն՝ մինչև օգոստոս ամսին փաստացի գործունեություն իրականացնելը, վճարել է 2015 թ-ի օգոստոս ամսվա արտոնագրային վճարը՝ գումարով 126.000 դրամ, հիմք՝ 30.07.2015 թ-ի վճարման թիվ 30 հանձնարարագիրը:

Հանձնաժողովը գտնում է, որ ստեղծված իրավիճակում, երբ Ա/Ձ Անաիդա Խաչիկյանը մինչև գործունեության իրականացնելը ուղարկել է Արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունը, ինչպես նաև նախապես վճարել է նախատեսված արտոնագրային վճարը, իսկ Հայտարարությունը հասցեատերոջ կողմից չստացվելը պայմանավորված է եղել թյուրիմացությամբ, հետևապես տվյալ դեպքում կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույները, որի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ա/Ձ Անաիդա Խաչիկյանի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

Ձեռյալ համարել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 01.09.2015 թ-ի թիվ 6114044 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ